

ԳԻՐԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ.

ԱՄՍԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ARAM I CATHOLICOS OF CILICIA, SAINT NERSES THE GRACIOUS
AND CHURCH UNITY: ARMENO-GREEK CHURCH RELATIONS (1165-
1173), ARMENIAN CATHOLICOSATE OF ANTHELIAS-LEBANON, 2010,
251P., 1 MAP.**

**ԱՐԱՄ Ա ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ
ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1165-1173), ԱՆԹԻԼԻԱՍ-ԼԻԲԱՆՈՆ,
2010, 251 ԷԶ, 1 ՔԱՐՏԵԶ**

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ը Լիբանանի, Նայասարանի եւ սփյուռքի եկեղեցական-հոգևոր եւ հասարակական կյանքում հսկայական դեր է կատարել: Նա նաեւ լայն մրահորիզոն ունեցող գիտնական է, որի գիտական երախայրիքի նկարագրությանն ու վերլուծությանն է նվիրված ներկա գրախոսությունը:

ԺԲ դարի 60 - 70-ական թթ. հայ-բյուզանդական դավանաբանական երկխոսությունը կարեւորագույն փուլերից մեկն է ոչ միայն երկու եկեղեցիների միջեւ փոխհարաբերությունների զարգացման պայմանության մեջ, այլ նաեւ իր ուրույն արեղն ունի համաշխարհային եկեղեցաքաղաքական գործընթացների ընկալման խնդիրներում: Գրքի Մուտքում իսկ Վեհափառ Նայրապետն անդրադառնում է Նայոց պայմանության կիլիկյան դարաշրջանի դերին ու նշանակությանը, քրիստոնեական Քույր եկեղեցիների, հարկապես բյուզանդական եկեղեցու հետ փոխհարաբերություններում Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսի խաղացած առաքելությանը: Այս մենագրության համար հեղինակը 1974 թ. սրացել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի “Master of Sacred Theology” գիտական ասպիրանտ: Իր գիտական հետաքրքրությունները ստարարելու եւ խրախուսելու համար հեղինակը երախարագի պայություն է հայրնում Մեծի Տանն Կիլիկիո հանգուցյալ Կաթողիկոս Խորեն Ա-ին, Բեյրութի Ամերիկյան համալսարանին, Ասրվածաբանության Մերձավոր Արեւելքի ինստիտուտին, Կիլիկիայի Նայոց կաթողիկոսության եւ Նայկազյան համալսարանի գրադարաններին, հարկապես դոկտ. Ջոն Պիրին եւ այլոց՝ աշխատության ձեռագիրն ընթերցելու եւ արժեքավոր խորհուրդ-

ներ փալու համար: Պիրի հավելել, նաև, որ հեղինակը, հրապարակությունից առաջ վերանայել է մենագրությունը և հարստացրել նոր լույս փնտած մասնագիտական գրականության հղումներով: Գիրքը բաղկացած է երկու մասից, մենագրության հրապարակությանը կցված Վերջաբան-Տեսականից, մատենագիտությունից, սուրբգրային հղումներից և ընդհանուր ցանկից, քարտեզից:

Առաջին մասը սկսվում է Ներածությամբ, որտեղ հեղինակն անդրադառնում է հայ-բյուզանդական պատմա-եկեղեցական շփումների պատմությանը՝ ներկայացնելով Նայոց Եկեղեցու կայացման, Տիեզերական Եկեղեցուց անջատված Քույր եկեղեցիների, հապկապես Կ. Պոլսի պատրիարքական աթոռի հետ փոխհարաբերությունները մինչև ԺԲ դարի 70-ական թթ., հղելով հարցի պատմությանը նվիրված վերջին փորձերին լույս փնտած հիմնական գրականությունը: Ինչպես հայտնի է, հիշարակված խնդիրները վերջին փորձերին նորովի լուսաբանության են արժանացել Ն. Գարսոյանի¹, Ի. Օմեի² և Ի. Դորֆման-Լազարեի³ մենագրական հետազոտություններում: Նեղինակը գրքի այս մասում անդրադարձ է կատարում նաև ներկա աշխարհային համար հիմք դարձած սկզբնաղբյուրներին: Դրանց մեջ իհարկե կարևոր փուլ է զբաղեցնում հայերեն լեզվով պահպանված “Պատճառ խնդրոյ միաբանութեան” նամակների հավաքածուն և Թեոփիանոս կայսերական իմաստասեր-բանագնացի հունարենով պահպանված “Տրամախոսությունների” (Διάλξεις) ժողովածուն: Մյուս սկզբնաղբյուրները հիշարակելիս արժեր անդրադառնալ Գ. Պալմեանի հրապարակած “Գլխակարգութիւնք” բնագրին, Մարթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Սմբատ Սպարապետի (Գունդսպար) և Վարդան Արեւելցու պատմական աշխատությունների հրապարակության արդի վիճակին, Միքայել Ասորու բնագրի թարգմանության երկու միմյանցից փոքրերվող հայերեն փոքրերակներին, որոնց պատմաբանասիրական հետազոտությունը հայագիտության կարևորագույն անելիքներից է: Գրականության փնտրությունը կլինել առավել ամբողջական, եթե քննարկվեին գիտական գրականության մեջ փուլ գրած փոքրեր մեկնակետերը և դրանց համար պատմական հիմք հանդիսացող մրայնությունները:

Բուն հետազոտությունը սկսվում է “Պատմական երևախորքով”, ուր հեղինակը ներկայացնում է Նովիաննոս Բ Կոմնենոսի կիլիկյան ռազմարշավից (1136-1138) հետո փարաձառյալում սրելոված քաղաքական իրավիճակը: Այսպես, կարծում ենք, առավել իրափասական կլինել Թորոս Բ իշխանի կող-

1 L'Église Arménienne et le Grand Schisme d'Orient / par Nina Garsoïan, Lovanii, in aedibus Peeters, 1999 (CSCO, v. 574, Sub. t. 100).

2 Isabelle Augé, Byzantins, Arméniens & Francs au temps de la croisade, Paris, Geuthner, 2007; Église en dialogue: Arméniens et Byzantins dans la seconde moitié du XII^e siècle / par Isabelle Augé, Lovanii, in aedibus Peeters, 2011 (CSCO, v. 633, Sub. t. 124).

3 Arméniens et Byzantins à l'époque de Photius: deux débats théologiques après le triomphe de l'Orthodoxie / par Igor Dorfmann-Lazarev, Lovanii, in aedibus Peeters, 2004 (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 609, Subsidia tomus 117). p. XX + 326.

մից Կիլիկիայի հայկական իշխանության վերականգնման խնդիրը կապել խաչակրաց Բ ռազմարշավի քաղաքական ձեռքբերումների հետ⁴։ Այս պայթյաբում դեռևս կարևոր դերակատարություն ուներ Լամբրոնի Ներումյան իշխանությունը։ Քաղաքական խաղն առավել դինամիկ է դառնում, երբ Թորոս Բ-ի մահից (1167 թ.) հետո իշխանության լծակներն անցնում են Հալեպի արաբեկ Նուր ադ-Դինի ստորակա և դաշնակից Մլեհի ձեռքը։ Պակաս կատոր չեն Հոմկլայի կաթողիկոսարանի կարգավիճակի (եկեղեցական և քաղաքական) հետ կապված խնդիրները, հայրնի է, որ այն մեզ հետաքրքրող դարաշրջանում հայերին միավորող համագալին միակ կազմակերպությունն էր, այն փաստորեն հայկական *Էկումենիկ* ղեկավարման կենտրոնի նախապիպն էր դարձել։ Ամենայն Հայոց կաթողիկոսարանը հաշտարար դարավորի լիագորություններ էր իրականացնում րարաձաշրջանում, դրա ամենավառ օրինակը Ներսես Շնորհալո կողմից 1165 թ. Ներումյան և Ռուբինյան րների հաշտեցումն է, որին հաջորդում են հայբյուզանդական եկեղեցական բանակցությունները։ «Եկեղեցական իրադրությունը» ենթագլխում հեղինակը ներկայացնում է ԺԲ դարի 40-70-ական թթ., Գրիգոր Գ Պաիլավունի և Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսների դարաշրջանում, րեղի ունեցած հիմնական եկեղեցական իրադարձությունները, 30-40-ական թթ. հայ-լարին փոխհարաբերությունները։ «Բյուզանդիայի արաբին քաղաքականությունը» ենթագլխում խոսվում է Կոմենենոսների դարաշրջանի Բյուզանդիայի արևելյան քաղաքականության գերագույն նպարակների և Կիլիկիայում հասարավելու հիմնական փորձերի մասին։ Անդրադառնալով եկեղեցական իրադրությանը հեղինակն արդարացիորեն ընդգծում է Կիլիկիայի ու Հյուսիսային Ասորիի քաղաքական միավորների և ազգաբնակչության կրոնադավանական բազմազանությունը, որն իր ազդեցությունն է թողել հետագորված դարաշրջանի պարամամշակոթային միջավայրի ձևավորման վրա։

«Նամակագրություն և փոխհարաբերություններ» բաժինը սկսվում է «Կապերի հասարարումը» ենթաբաժնով, որրեղ հեղինակն անդրադառնում է 1165 թ. Կիլիկիայի բյուզանդական դուքս (պոպոսարարոր, վերարեսուչ, սրարենգոս, ավրոկրարոր⁵) Ալեքս Աքսուխի՝ Մամիսարա քաղաքում, Ներսես Շնորհալու հետ սկսած բանակցություններին։ Երկխոսության այս փուլի ավարտը, կարծում են, պերք է թվագրել Մանուել Ա Կոմենենոս կայսեր մահով (1180 թ.)։ Այս ժամանակաշրջանում նկարելի է Բյուզանդական կայսրության րարաձքում Հայոց Եկեղեցու նկարմամբ ձևավորված հանդորժողականության դրսևորում, որի պայմաններում պարար ևող էր սրեղծվել երկկողմ բանակցությունների համար։ Ամենայն հավանականությամբ, սկսված բանակցություններում Ալեքս Աքսուխի բարձրացրած խնդիրները հարակ ձևակերպվել էին Կ. Պոլսի բյուզան-

4 Տեն Ա.Քոզդյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայասարնը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 165-190։

5 Հիշարակված րեղինների մասին րեն նույն րեղում, 207-210։

դական պարբերականի կողմից եւ կայսերական պաշտոնյայի միջնորդությամբ դրվել հայ-բյուզանդական բանակցությունների սեղանին: Այդ խնդիրների պարասխանները մանրամասն շարադրանքով իր նամակում ներկայացնում է Ներսես Շնորհալին, բերելով դրանք Նայոց եկեղեցու հավաքո հանգանակի հետ միասին: Ներաբրբիր է, որ այդ վավերագիրը հետագայում երկարատև պարմական ճանապարհ է անցել, հիմք դառնալով Նայոց կաթողիկոսարանի կողմից նմանապիպ վավերագրերի շարադրման համար⁶: «Բանակցությունների առաքական» ենթաբաժնում հեղինակն անդրադառնում է երկխոսության սկզբում կողմերի միջև փոխանակված վավերագրերին, կայսերական դեսպանագնաց Սմբատի առաքելությանը, Ներսես Դ Շնորհալու «Սահմանք հաւարոյ» եւ «Յաղագս աւանդութեան Եկեղեցոյ» գրությունների շարադրման պարագաներին: Կարծում եմ, այսպիսի պետք է հաշվի առնվեր մեր սրբագրությունը Ներսեսի առաջին թղթում, որտեղ առաջարկել էինք «Արուխի» փոխարեն «Աքսուխ» ընթերցումը⁷: «Նամակագրությունից բանակցություններ» եւ «Երկխոսության շարունակությունը» ենթաբաժիններում հեղինակն անդրադառնում է Թեոփանոս մագիստրոսի առաջին եւ երկրորդ դեսպանագնացություններին, մասնակիցների ինքնությանը, պահպանված հունարեն բնագրին, քննարկված խնդիրների դավանաբանական ծալքերին, հիմնական՝ «Բնության» խնդրի վերաբերյալ կողմերի մոտեցումներին: «Նայ-ասորական փոխհարաբերություններ» ենթաբաժնում գրքի հեղինակն անդրադառնում է այդ խնդրը վերաբարձող հայերեն, ասորերեն եւ հունարեն լեզուներով պահպանված սկզբնաղբյուրներին, հայ-բյուզանդական բանակցություններում Նակորիկ-ասորական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության մասնակցությանը, Ներսես Դ Շնորհալի Կաթողիկոսի եւ Միքայել Ա Ասորի (1166-1199)⁸ Պարբերաբի փոխանակված նամակներին: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ ասորի Պարբերաբի հետ Ներսես Շնորհալին փորձել է քննարկել բյուզանդական կողմի ներկայացրած ծիսադավանական հիմնական պահանջները: Դավանաբանական խնդրում կողմերը նմանություն են տեսնում Բաղկեդոնի հավաքաբանական մոտեցումների եւ նեստորականության միջև, սակայն ծիսադավանական հարցերում ունեն որոշակիորեն տարբերակված մոտեցումներ: «Բանակցությունների ընդհարումը» ենթաբաժնում հեղինակն անդրադառնում է Ներսես Դ Շնորհալու՝ 1172 թ. Բյուզանդական կայսր Մանուել Ա-ին եւ Պարբերաբ Միքայելին գրած նամակներին, հիշյալ թվականին Նայոց եկեղեցու շրջանակներում եկեղեցա-

6 Տե՛ս Ա.Քոզոյան, Նայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը /1165-1178 թթ./, Եր. 1995, էջ 34-38:

7 Նույն տեղում, էջ 42-43:

8 Մեր կարծիքով մասնագիտական շրջանակներին կարող է շփոթության մեջ գցել անգլերեն գրքում Michael Asori անվանաձևի օգտագործումը, այն դեպքում, երբ արդեն արևմտյան գիտական գրականության մեջ մի քանի հարյուրամյակ այդ հեղինակը ծանոթ է Michel of Syrian (Michele le Syrien, Michael I.) անունով:

կան ժողով հրավիրելու ձեռնարկումներին⁹: Սակայն այս միջոցառումը ժամանակավորապես հետաձգվում է Ներսես Դ Շնորհալու անժամանակ մահով (1173 թ. օգոստոս 13): Կաթողիկոսական գահին նրան փոխարինած Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը (1173-1193) 1174/5 թ., «ի ձեռն հեպիտուրաց ոմանց ճարտարաց» սրանալով կայսերական նամակը¹⁰, անմիջապես պապասխանում է եւ Կ. Պոլիս ուղարկում բյուզանդական Եկեղեցու կրոնավոր Կոստանդին քահանային: Հայոց կաթողիկոսը խնդրում է նաեւ բյուզանդական կայսրին, հիշյալ գործչին ձեռնադրել, Կ. Պոլսի եւ Անարիոքի պապրիարքների կողմից, «արքեպիսկոպոս շրջաբնակ գաւառացն, ի մայրաքաղաքն Յերապոլիս»¹¹, այսինքն Հյուսիսային Ասորիքի մելքիք շրջանների հոգևոր առաջնորդ: Գրիգոր Տղայի դավանաբանական նամակն արժանանում է բյուզանդական կայսեր¹² եւ Պապրիարքի¹³ հավանությանը: 1178 թ. Զարկի քոներով թվագրվող Հռոմկլայի ժողովը¹⁴ դարձավ հայ-բյուզանդական տասներեքամյա բանակցությունների վերջին փուլը: Իհարկե, ինչպես այս բանակցություններից առաջ¹⁵, այնպես էլ դրանից հետո¹⁶, եւ՛ բյուզանդական, եւ՛ հայկական կողմը շարունակում են փոխանակել վավերագրեր եւ դեսպանագնացություններ, սակայն այդ փոխհարաբերությունները

9 Այսրեղ կարելի էր անդրադառնալ Հռոմկլայի կաթողիկոսարանի առաքելությանը ոչ միայն բուն Հայաստանում, այլ նաեւ ողջ Մերձավոր Արեւելքում, հատկապես նրա կառուցվածքային առանձնահատկություններին: Ինչ վերաբերում է Աղվանից եկեղեցուն, վերջին պարիներին լույս են տեսել մի շարք հետազոտություններ, որոնք նոր լույս են սփռում այդ կառույցի խաղացած պարմամշակութային դերի վրա:

10 «Ընդհանրական թուղթը Սրբոյն Ներսեսի Շնորհալոյ», Երուսաղեմ, 1871, էջ 166:

11 Նույն տեղում:

12 Գրիգոր Դ Տղայի նամակի մասին Մանուէլ Ա Կոմնենոսի պապասխան թղթում փրվում է հետեւյալ բնորոշումը. «Բսկ նամակ քո սրբութեանդ գոր գրեալ ես, հաճոյ թուցաւ թագաւորութեանս մեր, որպէս ուղղափառի առ Քրիստոս եւ մեզ ի բարեպաշտութիւնն երգակցի, ընդ որ ուրախ եղև թագաւորութիւնս մեր մեծապէս» (Նույն տեղում, էջ 174):

13 Կ. Պոլսի Միքայել պապրիարքն էլ է այդ նամակի մասին արարահայրվում ամենայն բարյացակամությամբ. «Ընկալաք զամենայն ուղղափառութեամբ լցեալ գիր աստուածիմաստ ուղղափառ եւ Աստուծով ուղղաւորելոյ ինքնակալի մերոյ գոր առ ձեր աստուածապաշտութիւնդ գրեաց, որով յայր արարեալ հաստատեաց իւր թագաւորական գրովն գոր առ մեզ փառաւորութիւնն...» (Նույն տեղում, էջ 177):

14 Ժողովի հրավիրման ժամանակի եւ պարմաբանասիրական խնդիրների հետ կապված հարցերը փնտրելու համար, հայ-բյուզանդական..., էջ 182-181:

15 Մանուէլ Ա Կոմնենոսի Մահից (1180 թ.) հետո եւս պահպանվել են մի շարք ուշագրավ վավերագրեր. **Ա. Բոջոյան**, Новый памятник Армянно-византийских церковно-политических и дипломатических сношений второй половины XII века.- Кавказ и Византия, вып. 4, Ереван, 1984, с. 224-231; **Ն. Բարթիկյան**, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության եւ Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին.- Բանբեր Մատենադարանի, 1958, թ. 4, էջ 285-295; **Նույնի**, Բառակ Անգելոս կայսեր պապասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային.- «Էջմիածին», 1967, թ. 4, էջ 50-55; **Նույնի**, Հայ-բյուզանդական նոթեր.- ՎՍՄՈ. ԳԱ Տեղեկագիր. հասարակական գիտություններ, 1960, թ. 7-8, էջ 133-138; **Նույնի**, Կիլիկյան Հայաստանի եւ Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները եւ դրանց քաղաքական ծայրերը.- «Աշխատանք» վարեցիք, հյր. Ա, Եր. 1995, էջ 112-126; **Н. Bartikian**, Les relations des églises de l'Arménie cilicienne et de l'Empire Byzantin et leurs implications politiques.- Actes du Colloque 'Les Lusignans et l'Outre Mer', Poitiers-Lusignan 20-24 Octobre 1993, p. 47-53:

հնարավոր չէ բացատրել միայն 1165-1178 թթ. բանակցությունների լույսի ներքո. փոխվում են ակնկալությունները և բանակցային գործընթացի նկատմամբ վերաբերմունքը:

«Եզրակացություններ և նկատառումներ» բաժնում հեղինակը կրկին շեշտադրելով Քաղկեդոնի ժողովի դերը ԺԲ դարի հայ-բյուզանդական բանակցություններում, փորձում է քննարկել երկու՝ առաքելական և ուղղափառ եկեղեցիների բանակցությունների հիմնական արդյունքները, դրանց քաղաքական ենթադրեքստը Կիլիկյան Նայասարանի եկեղեցաքաղաքական միջավայրում: «Միության բնույթը» ենթաբաժնում խոսվում է միջնադարյան Էկումենիզմի կարևորագույն «մեկն է Քրիստոսի եկեղեցին» աստվածաբանական սկզբունքի մասին, որն էլ կողմերը դնում էին միութենական բանակցությունների հիմքում: Բյուզանդական Եկեղեցին դրան հավելում էր նաև երկու եկեղեցիների դավանաքի և ծեսի նույնացման պահանջը: «Քաղկեդոնի ժողովը» բաժնում հեղինակն անդրադառնում է բանակցություններում դավանաբանական խնդիրների արձարձման փուլայինություններին. շեշտելով բյուզանդական կողմի գլխավոր նախապայմանը՝ այդ ժողովի ուղղափառության ճանաչումը Նայոց Եկեղեցու կողմից: Ըստ հեղինակի՝ Ներսես Շնորհալին բյուզանդական կողմին ուղղած իր նամակներում ոչ հիշատակում է Քաղկեդոնի ժողովը, ոչ էլ քննադատում նրա հավաքող հանգանակը: Նրա նպատակն է իրար մոտեցնել հակաքաղկեդոնական (այս դեպքում Նայոց եկեղեցու) և քաղկեդոնամետ (pro-Chalcedonian) քրիստոսաբանական դիրքորոշումները, փորձել ցույց տալ դրանց ենթադրեքստային նույնությունը: Ի դեպ, ըստ հեղինակի, Ներսես Շնորհալին նշում է թե՛ Նեստորի, և թե՛ Եվրիբեսի ծայրահեղ մոտեցումները, ընդգծելով, որ կողմերի դավանաբանություններն էապես տարբերվում են հիշյալ ձևակերպումներից. «...հեռի գոյով ձեր ի Նեստորի բաժանմանէն, և մեր յԵւրիբեսայ շփոթմանէն...» (Էջ 87): Միաժամանակ Արամ Ա-ը շեշտում է, որ դավանաբանական նամակի շարադրանքի եզրաբանությունը շեղվում է Քաղկեդոնի փերմինաբանությունից:

«Փոխադարձ սեր. միության հիմքը» ենթաբաժնում հեղինակն արդարացիորեն ընդգծում է, որ Նայոց եկեղեցին խնդիրը դիպում է համաքրիստոնեական միության, աստվածային սիրո ենթադրեքստում: «Նավասարություն և ոչ փրկապետություն» ենթագլխում բացատրվում է Ներսես Շնորհալու մոտեցումը եկեղեցիների միությանը, որտեղ կարևորագույն մեկնակետը Քրիստոսի շուրջ բոլորի ուղղափառների միությունն է, բացառելով՝ հզորին ենթարկվելու բյուզանդական պրակտիկան և նկրտումները: Եկեղեցիների բաժանումը նա համեմատում է Քրիստոսի մարմնի մասնատման հետ: «Աղոթքի դերը» ենթաբաժնում ընդգծվում է, որ Ներսես Շնորհալու համար մեծ դեր էր խաղում այն հանգամանքը, որ Նայոց և բյուզանդական եկեղեցիները միութենական աղոթքի միջոցով դիմում են Ս.Նոգուն՝ դրանով իսկ հավաքացյալ համայնքները մոտեցնելով միմյանց: «Ինքնության մարտահրավերը» ենթաբաժնում ընդգծվում է Շնորհա-

լու կոմպլիմենտար մոտեցումը հավարի և դավանաբանական հարցերում, ուր կարևոր տեղ պիտի զբաղեցնեին յուրաքանչյուր Եկեղեցու տեղական ավանդույթների պահպանումը: «Նայոց Եկեղեցու հանդուրժողականությունը» ենթաբաժնում խոսվում է բյուզանդական եկեղեցու հետ փոխհարաբերություններում Նայոց եկեղեցու առաջ քաշած սկզբունքներից մեկի՝ դավանաբանական հարցերում հասկացողության և տոլերանտության սկզբունքների պահպանման մասին: Կարելի է նկատել, որ մասնանշված գաղափարներն այսօր էլ դրվում են համաշխարհային Էկումենիկ շարժման գաղափարական հիմքում, որով էլ հեղինակը Ներսես Շնորհալու բնութագրում է իբրև Էկումենիկ սուրբ:

Աշխատության երկրորդ՝ «Բացարկան նշումներով» մասում քննարկվում են Ներսես Շնորհալու կայսր Մանուելին, բյուզանդական և հակոբիկ-ասորի նույնանուն պատրիարքներ Միքայելներին գրված նամակների անգլերեն թարգմանությունների համար հիմք դարձած բնագրերի, այլալեզու թարգմանությունների ընդհանուր բնութագիրը և սկզբունքները: Այնուհետև հեղինակն անգլերեն է թարգմանում ՊԻՄ ժողովածոյում պահպանված հետևյալ վավերագրերը. Ներսես Շնորհալու «Գիր հաւարոյ խոստովանութեան» (103-134), Մանուէլ Կոմնենոս կայսրն ուղղված առաջին թուղթ (135-137), Ներսես Շնորհալու կաթողիկոսի պատասխան (էջ 138-149), Նույնի, «Սահմանք հաւարոյ Նայասրանեայց եկեղեցոյ...» (150-164) և «յաղագս աւանդութեանց եկեղեցոյ» (164-179) գրությունները, Մանուէլ կայսրն առաջին նամակը՝ ուղղված Ներսես Շնորհալուն (180-181), կաթողիկոսի պատասխանը (182-191), Մանուէլ Կոմնենոսի երկրորդ պատասխան նամակը (192-193), «Գլխակարգեալ խնդիրքը» (194-196), Միքայել պատրիարքի նամակը (197-199), Ներսես Շնորհալու երրորդ պատասխանը կայսերական նամակին (200-201), նույն կաթողիկոսի նամակը Կ. Պոլսի Միքայել պատրիարքին (202-206), Ներսես Շնորհալու նամակը հակոբիկ ասորիների պատրիարք Միքայելին (207-208), Ներսես Շնորհալու նամակը «առեպիսկոպոսս և վարդապետս Նայասրանեայց վասն սիրոյ և միաբանութեան ընդ Յոյնս» (209-211) վավերագրերը: Նեղինակի թարգմանություններն ուղեկցվում են հիշյալ բնագրերում առկա տարբեր տեքստերին և երևույթներին վերաբերող բազմաթիվ օգտակար ծանոթագրություններով: Նախապես կարևոր են աստվածաբանական և դավանաժխտական խնդիրների բացատրությունները, դրանց շուրջ սրելով՝ գիրական գրականության մասնագետները, Աստվածաշնչային գովառությունների ամրագրումները: Աշխատության հեղինակը կարելի է ասել մի նոր աստիճանի է բարձրացրել ԺԲ դարի հայ բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերի հետազոտությունը: Այնուամենայնիվ կարելի էր ավելի ուշադրություն դարձնել զբոսն օգտագործված եզր-տերմիններին: Այսպես, կարելի էր ավելի ուշադիր լինել աշխատության մեջ բյուզանդական կայսր և պատրիարքի հիշատակման դեպքերում. օրինակ՝ Էկումենիկ պատրիարք անվանակոչումն ավելի ուշ շրջանի տիրույթ է: ԺԲ դարի

պաշտոնյաներին գիրական գրականության մեջ անվանում են Կ. Պոլսի պարբիարք: Գիրական գրականության մեջ բյուզանդական կայսրերին անվանում են կայսր՝ եւ ոչ թե թագավոր:

Աշխատության վերջում «Ապագայի կանխապեստումներ վերաձևված փեսականով» բաժինը կարելի է համարել աշխատության վերջաբանը: Նեղինակը փրեղեկացնում է, որ բուն աշխատանքն սկսել է գրվել 1974 թ., իբրեւ արեղայի մագիստրոսական ավարտաճառ, իսկ ներկա հարվածը հավելում է արդեն իբրեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս: Վեհափառ Նալբանդյան արդեն մի քանի փաստանյալ գործուն մասնակցություն է ցուցաբերում Եկեղեցիների Նամաշխարհային Խորհրդի աշխատանքներին եւ բարձր պաշտոններ է զբաղեցնում այդ կազմակերպության ընտրովի մարմիններում: Խորհուրդը նախաձեռնում է քույր եկեղեցիների եւ հարանվանությունների միջեւ բանակցություններ եւ խորհրդակցություններ Էկումենիկ շարժման շրջանակներում, որն օգնում է Արևելյան (այսպես կոչված մոնոֆիզիտ) եւ Արեւմտյան (այսպես կոչված դիոֆիզիտ) ուղղափառ եկեղեցիների մեծեցմանը, սփռվելով դավանաբանության եւ ծեսի քննարկման հարույժ հանձնաժողովներ: Այդ հանձնախմբերը պարբերաբար հրավիրում են խորհրդակցություններ, հանդես են գալիս միասնական կոմյունիկներով: Ընդհանրացնելով այս կազմակերպության քննարկումների եւ կայացրած որոշումների արդյունքները, դրանք համափրեղելի է փեսնում ԺԲ դարի հայ-բյուզանդա-ասորական եկեղեցական բանակցություններում Ներսես Շնորհալի կաթողիկոսի հեղինակած «Նաւարո հանգանակի» եւ մյուս փաստաթղթերի հետ, որոնք հիմնված են Կյուրեղ Աղեքսանդրացու «μία φύσις τοῦ Θεοῦ λόγου σεσαρκωμένη» դավանաբանական բանաձեռի վրա: Ըստ հեղինակի, եկեղեցիների միության Ներսես Շնորհալու կանխագծած սկզբունքներն այսօր էլ մնում են Էկումենիկ շարժման շրջանակներում Նալբանդյան եկեղեցու որդեգրած ուղեգիծը: Գրքի վերջում հեղինակը դրել է Մերձավոր Արևելքի ԺԲ դարի վերջի իրավիճակը ներկայացնող քարտեզ, ներկայացնում է խնդրին վերաբերող գրականությունը, բերում է Սուրբգրային հղումների, անձնանունների, փրեղանունների եւ փերմինների համընդհանուր ցանկեր, որոնք ավելի են հեշտացնում այս արժեքավոր մենագրության ընթերցումը:

պ.գ.դ. ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ